ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

---

<<Շամս Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն

Մամե Հասանյանին

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

Ինչպես գիտեք 2022թ-ի փետրվարի 14-ին <<Արարատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի և <<Շամս Գրուպ>> ՍՊԸ-ի միջև կնքվել է ապրանքի մատակարարման **ԱՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/01**պայմանագիրը, համաձայն որի Դուք ստանձնել եք պարտավորություն պատշաճ կերպով մատակարարել սննդամթերքի այն չափաբաժինները, որոնցով որ հաղթող եք ճանաչվել նախապես հայտարարված գնման ընթացակարգի ժամանակ (պայմանագրի հավելված 3):

Սակայն մեր համատեղ գործունեության առաջին իսկ օրվանից ակնհայտ նկատելի դարձավ Ձեր անփույտ և անպատասխանատու աշխատառճը, մասնավորապես մատակարարման ծամկետների խախտում, անորակ, ստանդարտներին և պայմանագրի պահանջներին չբավարարող սննդամթերք, հատկապես կաթնամթերքի մատակարարում և այլն:
Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով այն կարևորագույն հանգամանքը, որ մենք գործ ունենք մանկահասակ երեխաների հետ, ինչպես նաև հիմք ընդունելով **ԱՔ4Մ-ԳՀԱՊՁԲ-22/01**պայամանագրի 2.1.7 կետը, մենք որպես գնորդ որոշում ենք լուծել պայմանագիրը ամբողջությամբ և ձեռնարկելու ենք պայմանագրով և հրավերով նախատեսված համապատասխան միջոցներ, պայմանագիրը միակողմանի լուծելու արդյունքում առաջացած Ձեր պարտավորությունների կատարման համար:
Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները <<Արարատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

<<Արարատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ>>

ՀՈԱԿ-ի տնօրեն Գ.Մուրադյան

15.03.2022թ